



*«Մայլակով հաշմանդամների համար Երևան քաղաքի դատարանների  
և առողջապահական հաստատությունների շենքերի ֆիզիկական  
մատչելիության մակարդակի գնահատմանն» ուղղված սոցիոլոգիական  
հետազոտության*

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպություն՝ «ՈՒՆԻՍՈՆ» ՀԿ  
Ծրագիր՝ «Հաշմանդամություն ունեցող երևանցիների  
հրավումքների պաշտպանություն»  
Սոցիոլոգ՝ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Մույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպության միջոցով: Մույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին)՝ «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԽՆԴԻՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	6
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	6
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	8
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	30
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Դիտարկման քարտ.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Դիտարկված հաստատությունների ֆիզիկական մատչելիության գնահատման ցուցանիշների սանդղակները .....	36
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Դիտարկված հաստատությունների դասակարգումն ըստ մատչելիության .....	38



# 1. ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԵՎ ԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս, խոսելով տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ դրսևորվող խտրականությունից և նրանց իրավունքների պաշտպանությունից, հատուկ առանձնացվում են հաշմանդամներն ու նրանց իրավունքների պաշտպանությունը, նրանց համար հավասար պայմանների ստեղծումը, տարբեր ոլորտների ծառայությունների մատչելիության ապահովումը: Վերջինիս մեջ, ի թիվս այլոց, առանձնահատուկ կարևորություն է ստանում ֆիզիկական մատչելիությունը կամ հաշմանդամների համար «անարգել միջավայրի» ստեղծումը: «Մատչելի» կամ «անարգել միջավայր» տերմինը կիրառվում է շրջակա միջավայրի մասին խոսելիս, որտեղ կարող են ազատ մուտք գործել և տարբեր տեսակի գործունեություն իրականացնել ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող մարդիկ:<sup>1</sup> Սկզբնական շրջանում այս արտահայտությունը կիրառվում էր շենքերի և սարքավորումների նկարագրման համար, որոնցից կարող էին օգտվել սայլակ օգտագործող մարդիկ: Սակայն հետագայում այս տերմինի բնորոշման մեջ ընդգրկվեցին այնպիսի չափանիշներ, որոնց կիրառումը հարմար է նաև դժվար տեղաշարժվող այլ խմբերի համար, այն է՝ տեսողության խախտումներով հաշմանդամները, տարեց մարդիկ, ժամանակավորապես անաշխատունակները, հղի կանայք, մանկասայլակով երեխային ուղեկցող մարդիկ, նախադպրոցական տարիքի երեխաները և այլն:

Ակնհայտ է, որ «անարգել միջավայրի» խնդիրն է՛լ ավելի արդիական է դառնում, երբ խոսում ենք այնպիսի ոլորտների մասին, ինչպիսիք են առողջապահության և արդարադատության ոլորտների ֆիզիկական մատչելիությունը, քանզի սրանք այն ոլորտներն են, որոնց դեպքում մարդիկ չունեն այլընտրանք դրանց կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու տեսանկյունից: Օրինակ, իրավական խնդրի ծագման, կամ առողջական խնդիրների առաջացման դեպքում քաղաքացին ստիպված է դիմել համապատասխանաբար առաջին ատյանի դատարան և բուժհաստատություն (տարածքային պոլիկլինիկա, մասնագիտացված կլինիկա կամ բուժկենտրոն): Այս պարագայում հաճախ ոտնահարվում են սայլակ օգտագործող հաշմանդամների իրավունքները, քանզի Երևանում տեղակայված դատարանների, ինչպես նաև առողջապահական հաստատությունների շինությունների մեծ մասը ֆիզիկապես մատչելի չէ նման մարդկանց համար:

Ինչպես նշվեց վերևում, բացի սայլակ օգտագործող հաշմանդամներից, ճարտարապետական արգելքները (աստիճաններ, թեքահարթակների և վերելակների բացակայությունը կամ անհամապատասխանությունը պահանջվող նորմերին և այլն) դժվարեցնում են նաև բազմաթիվ այլ մարդկանց էլումուտը վերոնշյալ հաստատություններ:

Ենթակառուցվածքների զգալի փոփոխություններ են պահանջվում սայլակ օգտագործող կամ դժվար տեղաշարժվող մարդկանց լիարժեք կյանքի ապահովման համար:

Տվյալ հետազոտությունը նախաձեռնվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցներով «Քաունթերփարթ» և CASP կազմակերպությունների աջակցությամբ՝ «Ունիսոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող

<sup>1</sup> «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառում»: Մեթոդաբանական ձեռնարկ, «Ունիսոն» ՀԿ, Երևան, 2009թ.

*երևանցիների իրավունքների պաշտպանություն»* ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով վերհանել և ուսումնասիրել վերոնշյալ խնդիրները:

## **2. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հետազոտության նպատակն է (I) ուսումնասիրել Երևան քաղաքի դատարանների և առողջապահական հաստատությունների շենքերի ֆիզիկական մատչելիության մակարդակը սայլակ օգտագործող հաշմանդամների համար, (II) պատրաստել և հետազոտված հաստատությունների ղեկավարներին ներկայացնել խորհրդատվական առաջարկների փաթեթ՝ շինություններն առավել մատչելի դարձնելուն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների մասին, ինչպես նաև (III) իրազեկել սայլակ օգտագործող և այլ սակավաշարժ մարդկանց՝ առավել մատչելի բուժհաստատությունների և դատարանների ցանկի մասին:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- գնահատել Երևան քաղաքի դատարանների և առողջապահական հաստատությունների շենքերի ֆիզիկական մատչելիության մակարդակը՝ ըստ սահմանված ցուցանիշների,
- պարզել, թե որքանով են հաստատությունների ղեկավարները տեղեկացված սայլակ օգտագործող հաշմանդամների կարիքները բավարարելու համար անհրաժեշտ պայմանների մասին և ինչպես են գնահատում իրենց հաստատությունները հենց այդ տեսակետից:

## **3. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **Գնահատման ցուցանիշները**

Հետազոտության նպատակին հասնելու համար իրականացվել է հետազոտման ենթակա հաստատությունների դիտարկում, որը հիմք է հանդիսացել վերջիններիս ֆիզիկական մատչելիության մակարդակը գնահատելու համար:

Ֆիզիկական մատչելիության գնահատումն իրականացվել է ըստ մի քանի ասպեկտների (բլոկների) և դրանցում առանձնացված ցուցանիշների: Այդ ասպեկտներն են.

- Անցումը փողոցից դեպի հաստատության մուտք
- Հաստատության անմիջական մուտք
- Հաստատության մուտքի դուռ
- Իրավիճակը հաստատության ներսում<sup>2</sup>
- Վերելակ
- Հանրային սանհանգույց
- Հիվանդասենյակների, դրանցում առկա սանհանգույցների, ռենտգենի և սոնոգրաֆիայի սենյակների մատչելիություն (միայն ստացիոնար բուժհաստատությունների համար)

Վերոնշյալ ասպեկտների (բլոկների) շրջանակում դիտարկվել են գնահատման հետևյալ ցուցանիշները.

---

<sup>2</sup> Դիտարկման ընթացքում գնահատվել է հատկապես առաջին հարկում սայլակով հաշմանդամի տեղաշարժման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը, քանզի հակառակ դեպքում մուտքը մնացած հարկեր հաշմանդամի համար ի սկզբանե անհնարին է դառնում:

- աստիճան(ներ)ի և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը սահմանված նորմերին, աստիճան(ներ)ի և թեքահարթակի մոտ բազրիքի (թեքահարթակի մոտ՝ նաև եզրաշերտի) առկայությունն ու համապատասխանությունը սահմանված նորմերին,
- հաստատության մուտքի և ներսի (ներառյալ՝ սանհանգույցի) դռների համապատասխանությունը սահմանված նորմերին,
- վերելակի առկայությունը բազմահարկ շինություններում և դրա համապատասխանությունը սահմանված նորմերին,
- հանրային սանհանգույցի առկայությունն ու համապատասխանությունը սահմանված նորմերին (դուռ, բռնաձող, տազնապի կոճակ, տեղաշարժման համար անհրաժեշտ տարածություն, խոչընդոտներ),
- ստացիոնար բուժհաստատություններում՝ նաև հիվանդասենյակների և դրանցում առկա սանհանգույցների համապատասխանությունը սահմանված նորմերին,
- ստացիոնար բուժհաստատություններում՝ սոնոգրաֆիայի և ռենտգենի սենյակների առկայությունն ու դրանց մատչելիությունը սայլակով հաշմանդամի համար,<sup>3</sup>
- հաշմանդամի՝ հաստատություն մուտք գործելուն և տեղաշարժվելուն խոչընդոտող առկա հնարավոր գործոնները:

Բացի հաստատությունների շենքերի դիտարկումից, իրականացվել է նաև հարցազրույց տվյալ հաստատությունների ղեկավարների հետ՝ պարզելու համար, թե որքանով են նրանք տեղեկացված սայլակ օգտագործող հաշմանդամների կարիքները հոգալու համար անհրաժեշտ պայմանների մասին և ինչպես են գնահատում իրենց հաստատությունները հենց այդ տեսանկյունից:

### **Հետազոտության ընտրանքը**

Դիտարկման է ենթարկվել 118 հաստատություն: Հետազոտության ընտրանքի ներկայացուցչականությունը ապահովելու համար ընդգրկվել են առողջապահական հաստատությունների բոլոր տիպերը, այն է՝ բժշկական համալիրները, բժշկական կենտրոններն ու հիվանդանոցները, տարածքային պոլիկլինիկաները, ստոմատոլոգիական կլինիկաները, մասնագիտացված կլինիկաները, դեղատները, ինչպես նաև Երևանում տեղակայված բոլոր դատարանները:

Բուժհաստատությունների ընտրանքը ձևավորվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված բուժհաստատությունների ցանկի, ինչպես նաև «Մփյուռ» տեղեկատվում գրանցված հաստատությունների ցանկի համադրման հիման վրա: Ցանկում առկա գրեթե բոլոր բուժհաստատություններն ամբողջությամբ ընդգրկվել են ընտրանքում, ծրագրի իրականացման ժամանակահատվածի սահմանափակությունից ելնելով՝ չեն դիտարկվել միայն մասնագիտացված ծառայություն չմատուցող մասնավոր բուժհաստատությունները:

Այսպիսով, դիտարկվել են Երևանում գործող գրեթե բոլոր խոշոր բժշկական համալիրները, վերականգնողական և բժշկական կենտրոնները, պոլիկլինիկաները, նեղ

<sup>3</sup> Հենաշարժողական ապարատի խնդիրներ ունեցող հաշմանդամներն առավել հաճախ դիմում են բուժհաստատություններ սոնոգրաֆիայի կամ ռենտգենի ծառայություններից օգտվելու համար:

մասնագիտական ծառայություն մատուցող բուժհաստատությունները, պետպատվերով ծառայություն մատուցող ստոմատոլոգիական կլինիկաները, ինչպես նաև Երևանում գործող 5 խոշոր դեղատնային ցանցի մեկական դեղատուն: Ընտրանքի մեջ ընդգրկվել են Երևանում գործող բոլոր դատարանները:

Դիտարկված հաստատությունների համամասնական բաշխումը ներկայացվում է արդյունքների վերլուծության բաժնում:


#### 4. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ըստ դիտարկման քարտում առանձնացված բաժինների (բլոկների), արդյունքները ներկայացվում են սոկոսներով:

##### Ա. Հետազոտված հաստատությունները

Ստորև ներկայացվում է դիտարկված հաստատությունների համամասնական բաշխվածությունն ընտրանքում:

Գծապատկեր 1.



##### Բ. Հաստատության ղեկավարի (ներկայացուցչի) վերաբերմունքը հիմնախնդրին


Պարզելու համար, թե որքանով են հաստատությունների ղեկավարները տեղեկացված սայլակ օգտագործող հաշմանդամների կարիքները բավարարելու համար անհրաժեշտ պայմանների մասին և ինչպես են գնահատում իրենց հաստատությունները հենց այդ



տեսակետից՝ անցկացվել է հարցազրույց դիտարկված հաստատությունների ղեկավար անձնակազմի ներկայացուցիչների հետ, այն է՝ տնօրենների/ղեկավարների (52.2%), փոխտնօրենների/ղեկավարի տեղակալների (38.1%), գլխավոր հաշվապահների (4.4%), հաստատության այլ ներկայացուցիչների (5.3%) հետ: Ստորև ներկայացվում են վերջիններիս գնահատականներն ու կարծիքները:

Այն հարցին, թե իրենց (բուժ)հաստատության շենքը և ներքին հարդարանքը որքանով է բավարարում սայլակավոր հաշմանդամների կարիքները հոգալու համար, ստացվել են հետևյալ պատասխանները (տե՛ս գծապատկեր 2).

## Գծապատկեր 2.




Ինչպես երևում է գծապատկեր 2-ում, հարցվողների մոտ 30%-ը կարծում է, որ իր հաստատությունը լիովին համապատասխանում է սայլակով հաշմանդամի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ նորմերին, իսկ հարցազրույցի մասնակիցների մոտ 45%-ը դժվարացել է գնահատել իր հաստատության մատչելիության մակարդակը. կարելի է ենթադրել, որ սա իրազեկության պակասի արդյունք է, այսինքն հարցվողներն ուղղակի չեն պատկերացնում, չգիտեն, թե ինչպիսի պայմաններ պետք է հաշվի առնել հաստատության կառուցման կամ վերանորոգման ժամանակ՝ հաստատության ֆիզիկական մատչելիությունն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է այն հաստատություններին, որոնք, ըստ հարցվողների, մասամբ բավարարում են հաշմանդամների կարիքները, ապա պետք է նշել, որ նման հաստատությունների մեծամասնությունում հաշմանդամների համար առկա պայմանները (թեքահարթակ, բռնաձող և այլն) չէին համապատասխանում ընդունված նորմերին: Այս փաստը վկայում է այն մասին, որ նման պայմանների կիրառումը երբեմն ուղղակի ձևական, օրակարգային բնույթ է կրում՝ չկատարելով իր ուղիղ առաքելությունը:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ դիտարկված հաստատություններից 20.2%-ը առաջիկա 1 տարվա բյուջեում նախատեսում է միջոցներ հաշմանդամների համար շինությունն ավելի մատչելի դարձնելուն ուղղված բարեփոխումներ իրականացնելու համար, 79.8%-ը՝ ոչ, այնինչ այդպիսի բարեփոխումներն ուղղակի անհրաժեշտ են դիտարկված հաստատությունների մեծամասնության մոտ:

Գծապատկեր 3-ում ներկայացվում են այն բարեփոխումները, որոնք նախատեսվում է իրականացնել առաջիկա տարում:


**Գծապատկեր 3.**



1. որևէ բաժանմունքի հիմնովին վերանորոգում /8.7/
2. թեքահարթակների կառուցում մուտքի մոտ /17.4/
3. հաշմանդամների համար մատչելի վերելակի կառուցում /8.7/
4. շինության ամբողջական վերանորոգում /26.1/
5. աստիճանների կառուցում մուտքի մոտ /8.7/
6. սանհանգույցի կառուցում /8.7/
7. սանհանգույցում տազնապի կոճակի տեղադրում /8.7/
8. դժվ. պատ. /13.0/

Ինչպես երևում է գծապատկեր 3-ում, հաստատությունների մոտ 35%-ի դեպքում նախատեսվում է իրականացնել ամբողջական կամ մասնակի վերանորոգում, նման պայմաններում անհրաժեշտ է մշակել օպտիմալ մեխանիզմներ՝ վերահսկելու համար վերանորոգման ընթացքում սայլակավոր հաշմանդամների կարիքները բավարարելու համար անհրաժեշտ նորմերին պահպանումը:

**Գծապատկեր 4.**



1. բյուջեի սահմանափակությունը, ֆինանսների բացակայությունը/44.6/
2. դրա կարիքը չկա, քանի որ հաստատությունը քիչ թվով հաշմանդամներ է սպասարկում/8.7/
3. շինության ներկայիս նախագիծը թույլ չի տալիս նման վերակառուցումներ կատարել/14.1/
4. խոչընդոտում են պետական մարմինները /կադաստր և այլն/13.0/
5. բոլոր հարմարությունները կան, հաստատությունը լիովին մատչելի է հաշմանդամների համար /2.2/
6. հաստատությունը վարձակալված է և ենթակա չէ վերակառուցման /13.0/
7. վերջերս է վերանորոգվել

Ինչպես երևում է գծապատկերից, հաստատությունների՝ բարեփոխումներ չնախատեսելու առաջնային և ամենատարածված պատճառը ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունն է, երկրորդ ամեն-


նահաճախ հանդիպող պատճառն այն է, որ շինության ներկայիս նախագիծը թույլ չի տալիս համապատասխան վերակառուցումներ կատարել՝ հաստատությունը հաշմանդամների համար առավել մատչելի դարձնելու համար:

**Գ. Անցումը փողոցից դեպի հաստատության մուտք**

Հաստատության ֆիզիկական մատչելիության մակարդակի գնահատման համար կարևոր են ոչ միայն հաստատության անմիջական մուտքի և ներքին հարդարանքի պայմանները, այլև փողոցից մինչև հաստատության մուտք տանող ճանապարհին առկա խոչընդոտները, որոնք չհաղթահարելու դեպքում սայլակով հաշմանդամն ուղղակի չի կարող ինքնուրույնաբար մուտք գործել հաստատություն:

Ստորև ներկայացվում է դիտարկված հաստատությունների՝ փողոցից դեպի հաստատության մուտք տանող հատվածի մատչելիության մակարդակը:

**Գծապատկեր 5. Փողոցից դեպի հաստատության մուտք տանող ճանապարհին կողնակի (բորդյուր) և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին.<sup>4</sup>**




1. կա կողնակ թեքահարթակով, որը իդեալականորեն համապատասխանում է նորմերին /2.6/
2. կա կողնակ թեքահարթակով, որը շատ լավ համապատասխանում է նորմերին /0.9/
3. կա կողնակ թեքահարթակով, որը բավարար չափով համապատասխանում է նորմերին /4.4/
4. կա կողնակ թեքահարթակով, որը չի համապատասխանում է նորմերին /0.9/
5. կա կողնակ թեքահարթակով, որը վտանգավոր է սայլակավոր հաշմանդամի համար /2.6/
6. կա կողնակ առանց թեքահարթակի /21.9/
7. չկա կողնակ /66.7/

<sup>4</sup> Կողնակի և թեքահարթակի համապատասխանությունը նորմերին որոշվել է նախապես սահմանված սանդղակով, որը ներկայացված է հավելված 2-ում:

Ինչպես երևում է ստացված տվյալներից, հաստատությունների գրեթե 22%-ի դեպքում փողոցից դեպի հաստատության մուտք տանող ճանապարհին կա կողնակ առանց թեքահարթակի, ինչը բնականաբար անանցանելի խոչընդոտ է սայլակով հաշմանդամի համար, մոտ 1% դեպքերում թեքահակը չի համապատասխանում նորմերին, իսկ 2.6%-ի մոտ կողնակի թեքահարթակը նույնիսկ վտանգավոր է սայլակով հաշմանդամի համար: Այսպիսով ստացվում է, որ հաստատություններից մոտ 30%-ի դեպքում սայլակով հաշմանդամի մուտքը տվյալ հաստատություն «փակ է» հենց փողոցից:

**Գծապատկեր 6. Փողոցից դեպի հաստատության մուտք տանող աստիճանների և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին.<sup>5</sup>**



1. կան աստիճաններ թեքահարթակով, որը իդեալականորեն համապատասխանում է նորմերին /0.9/
2. կան աստիճաններ թեքահարթակով, որը շատ լավ համապատասխանում է նորմերին /1.8/
3. կան աստիճաններ թեքահարթակով, որը բավարար չափով համապատասխանում է նորմերին /1.8/
4. կան աստիճաններ թեքահարթակով, որը չի համապատասխանում նորմերին /2.7/
5. կան աստիճաններ թեքահարթակով, որը վտանգավոր է սայլակավոր հաշմանդամի համար /9.8/
6. կան աստիճաններ առանց թեքահարթակի /83.0/

<sup>5</sup> Աստիճանի և թեքահարթակի համապատասխանությունը նորմերին որոշվել է նախապես սահմանված սանդղակով, որը ներկայացված է հավելված 2-ում:


Գծապատկեր 6-ում երևում է, որ հաստատությունների 83%-ի դեպքում փողոցից դեպի հաստատության մուտք տանող ճանապարհին կան աստիճաններ առանց թեքահարթակի, ինչն անանցանելի խոչընդոտ է սայլակով հաշմանդամի համար, ընդ որում թեքահարթակ կառուցելը 75%-ի դեպքում հնարավոր է, իսկ 25%-ի դեպքում՝ ոչ, իսկ թեքահարթակ կառուցելու անհնարինության պատճառը 75%-ի դեպքում հանդիսանում է անբավարար տարածությունը, 25%-ի դեպքում շինության նախագիծը թույլ չի տալիս նման վերակառուցում կատարել: Միաժամանակ հաստատություններից մոտ 10%-ի մոտ մենք արձանագրել ենք աստիճաններ, որոնց թեքահարթակն ուղղակի վտանգավոր է հաշմանդամի համար:

Փողոցից դեպի հաստատության մուտք տանող աստիճանների ընդամենը 15%-ը ունեն բազրիք:

Առկա թեքահարթակի 33%-ի դեպքում կա բազրիք: Միևնույն ժամանակ 33%-ի դեպքում թեքահարթակի մոտ կա եզրաշերտ, որը համապատասխանում է նորմերին, իսկ 67%-ի դեպքում եզրաշերտ ընդհանրապես չկա, ինչը նույնպես վտանգավոր է դարձնում տվյալ թեքահարթակի օգտագործումը սայլակով հաշմանդամի համար:

Ստորև ներկայացվում են փողոցից դեպի հաստատության մուտք տանող ճանապարհին հանդիպող այլ խոչընդոտները:

**Գծապատկեր 7.**



Այսպիսով, երբ ամբողջացնում ենք ստացված պատկերը, ստացվում է, որ հաստատությունների մեծամասնության մոտ սայլակով հաշմանդամի ինքնուրույն մուտքը հաստատություն արդեն իսկ անհնար է դառնում մինչ հաստատության բուն մուտքին հասնելը՝ բակում կամ փողոցում:

## Դ. Հաստատության մուտքը

### Աղյուսակ 1.

	Տոկոսներով	
<b>Հաստատության մուտքի աստիճանների և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին</b>	կան աստիճաններ թեքահարթակով, որն իդեալականորեն համապատասխանում է նորմերին	3.5
	կան աստիճաններ թեքահարթակով, որը շատ լավ համապատասխանում է նորմերին	2.6
	կան աստիճաններ թեքահարթակով, որը բավարար չափով համապատասխանում է նորմերին	3.5
	կան աստիճաններ թեքահարթակով, որը վտանգավոր է սայլակավոր հաշմանդամի համար	14.1
	կան աստիճաններ առանց թեքահարթակի	50.9
	չկան աստիճաններ	25.4

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում, հաստատության մուտքի մոտ 51%-ի դեպքում կան աստիճաններ առանց թեքահարթակի, որոնք բնականաբար անանցանելի են սայլակով հաշմանդամների համար, ընդ որում թեքահարթակ կառուցելը 79%-ի դեպքում հնարավոր է, իսկ 21%-ի դեպքում՝ ոչ, իսկ թեքահարթակ կառուցելու անհնարիության պատճառը 50%-ի դեպքում հանդիսանում է անբավարար տարածությունը, իսկ 50%-ի դեպքում շինության նախագիծը թույլ չի տալիս նման վերակառուցում կատարել: Միաժամանակ պետք է նշել, որ աստիճանների ավելի քան 14%-ի դեպքում առկա թեքահարթակը վտանգավոր է սայլակով հաշմանդամի համար, իսկ բազրիք կա միայն 25%-ի մոտ: Միննույն ժամանակ 6.9%-ի դեպքում թեքահարթակի մոտ կա եզրաշերտ, որը համապատասխանում է նորմերին, 37.9%-ի դեպքում կա եզրաշերտ, որը չի համապատասխանում նորմերին, իսկ 55.2%-ի դեպքում եզրաշերտ ընդհանրապես չկա: Վերջինս նույնպես վտանգավոր է դարձնում թեքահարթակի օգտագործումը սայլակով հաշմանդամի համար:

Մուտքի աստիճաններից միայն 25% -ի մոտ է հանդիպում բազրիք:

Միայն հաստատությունների 25%-ի դեպքում հաշմանդամի մուտքը հաստատություն չի խոչընդոտվում աստիճաններով:

### Աղյուսակ 2.

	Տոկոսներով	
<b>Հաստատություն մուտք գործելուն խոչընդոտող այլ գործոններ</b>	բորդյուր, շեմ մուտքի մոտ	1.8
	առանց թեքահարթակի սանդուղք դեպի ներքև	0.9
	չկան այլ խոչընդոտներ	97.4

Բացի գլխավոր մուտքի դիտարկումից, դիտարկվել են նաև հնարավոր այլընտրանքային մուտք(եր)ի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին:

**Աղյուսակ 3.**

		Տոկոսներով
<b>Այլընտրանքային մուտքերի առկայություն</b>	կա մեկ այլընտրանքային մուտք	16.8
	կան մեկից ավել այլընտրանքային մուտքեր	17.7
	չկա այլընտրանքային մուտք	65.5

Ինչպես երևում է աղյուսակ 3-ում, հաստատությունների 65.5%-ը չունեն այլընտրանքային մուտքեր, ինչը գլխավոր մուտքի անմատչելիության կամ անանցանելիության դեպքում անհնար կդարձնի հաշմանդամի մուտքը տվյալ հաստատություն:

**Աղյուսակ 4.**

		Տոկոսներով
<b>Այլընտրանքային մուտքի աստիճանների և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին</b>	կան աստիճաններ և թեքահարթակ, որը իդեալականորեն համապատասխանում է նորմերին	5.0
	կան աստիճաններ և թեքահարթակ, որը բավարար չափով համապատասխանում է նորմերին	2.5
	կան աստիճաններ և թեքահարթակ, որը չի համապատասխանում նորմերին	2.5
	կան աստիճաններ և թեքահարթակ, որը վտանգավոր է սայլակով հաշմանդամի համար	12.5
	կան աստիճաններ առանց թեքահարթակի	47.5
	չկան աստիճաններ	30.0

Դեպի այլընտրանքային մուտք տանող 70% աստիճանների առկայության պայմաններում դրանցից 40.7%-ը ունեն բազրիք, իսկ 59.3%-ը՝ ոչ:

Առկա աստիճանների համար թեքահարթակ կառուցելը 76.5%-ի դեպքում հնարավոր է, իսկ 23.5%-ի դեպքում՝ ոչ, ընդ որում թեքահարթակ կառուցելու անհնարինության պատճառը 25%-ի դեպքում հանդիսանում է անբավարար տարածությունը, իսկ 75%-ի դեպքում շինության նախագիծը թույլ չի տալիս նման վերակառուցում կատարել:


Առկա թեքահարթակի 28.6%-ի դեպքում կա բազրիք, իսկ 71.4%-ի դեպքում՝ ոչ: Միննույն ժամանակ 12.5%-ի դեպքում թեքահարթակի մոտ կա եզրաշերտ, որը չի համապատասխանում նորմերին, 12.5%-ի մոտ՝ եզրաշերտ, որը համապատասխանում է նորմերին, իսկ 75%-ի դեպքում եզրաշերտ ընդհանրապես չկա:

**Աղյուսակ 5.**

		Տոկոսներով
Այլընտրանքային մուտքին խոչընդոտող այլ գործոններ	բոլորը, շեմ մուտքի մոտ	10
	առանց թեքահարթակի սանդուղք դեպի ներքև	2.5
	այլ խոչընդոտներ չկան	87.5

**Ե. Հաստատության մուտքի դուռը**

**Գծապատկեր 8.**



**Աղյուսակ 6.**

		Տոկոսներով
Հաստատության դռան համապատասխանությունը նորմերին <sup>6</sup>	մեկ փեղկանի դուռ, որը մատչելի է սայլակավոր հաշմանդամի համար	25.4
	մեկ փեղկանի դուռ, որը մատչելի չէ սայլակավոր հաշմանդամի համար	0.9
	երկփեղկանի դուռ, որը բացվելու դեպքում մատչելի է սայլակավոր հաշմանդամի համար	14.9
	երկփեղկանի դուռ, որը նույնիսկ չբացվելու դեպքում մատչելի է սայլակավոր հաշմանդամի համար	58.8

Երբեմն խոչընդոտ է հանդիսանում ոչ միայն մուտքի դռան լայնությունը, այլև դռան մոտ գտնվող շեմը, որի բարձրությունը շատ հաճախ անանցանելի է սայլակով հաշմանդամի համար: Վերջինիս համար առավել մատչելի է միայն 3սմ-ը չգերազանցող բարձրությամբ շեմը: Ինչպես երևում է գծապատկեր 8-ից, դիտարկված հաստատությունների մուտքերի

<sup>6</sup> Տե՛ս հավելված 2:



դռների մոտ 8% դեպքերում դռան շեմի բարձրությունը գերազանցում է սահմանված և սայլակով հաշմանդամի համար մատչելի բարձրության սահմանը:

Ինչ վերաբերում է հաստատության մուտքի դռան մատչելիությանը, ապա ըստ ստացված տվյալների (տե՛ս աղյուսակ 6), դիտարկված հաստատություններում առկա մեկփեղկանի դռներից (26.3%) ընդամենը 0.9%-ը չեն համապատասխանում նորմերին, մնացած հաստատություններում առկա երկփեղկանի դռներից (73.3%) զգալի մասը (58.8%) նույնիսկ փեղկը չբացելու դեպքում մատչելի են սայլակով հաշմանդամի համար, իսկ մի մասը (14.9%) մատչելի է միայն փեղկը բացելու դեպքում:

**9. Իրավիճակը հաստատության ներսում**

Շատ հաճախ սայլակով հաշմանդամները խոչընդոտների են հանդիպում հաստատության հենց առաջին հարկում, և նույնիսկ այն դեպքում, եթե հաստատության բակը և անմիջական մուտքը մատչելի են, ապա առաջին հարկում տեղաշարժվելը դառնում է անհնար սայլակով հաշմանդամների համար: Ստորև ներկայացվում են այն խոչընդոտները, որոնք բացահայտվել են դիտարկման արդյունքում և կարող են անմատչելի դարձնել սայլակով հաշմանդամի տեղաշարժվելն առաջին հարկում:

**Աղյուսակ 7.**

		Տոկոսներով
<b>Առաջին հարկում աստիճանների և թեքահարթակի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին</b>	կան աստիճաններ թեքահարթակով, որը վտանգավոր է սայլակավոր հաշմանդամի համար	3.5
	կան աստիճաններ առանց թեքահարթակի	25.4
	չկան աստիճաններ	71.1

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից, դիտարկված հաստատությունների առաջին հարկում 28.9% դեպքերում առկա են աստիճաններ, որոնցից 25.4%-ը՝ առանց թեքահարթակի, իսկ 3.5% դեպքերում առկա թեքահարթակը նույնիսկ վտանգավոր է հաշմանդամի համար: Միաժամանակ առկա աստիճանների համար թեքահարթակ կառուցելը 35.7%-ի դեպքում հնարավոր է, իսկ 64.3%-ի դեպքում՝ ոչ, ընդ որում թեքահարթակ կառուցելու անհնարինության պատճառը 76.5%-ի դեպքում հանդիսանում է անբավարար տարածությունը, իսկ 23.5%-ի դեպքում շինության նախագիծը թույլ չի տալիս նման վերակառուցում կատարել: Առկա թեքահարթակի մոտ բազրիք ընդհանրապես չկա: Միննույն ժամանակ 33.3%-ի դեպքում թեքահարթակի մոտ կա եզրաշերտ, որը չի համապատասխանում նորմերին, իսկ 66.7%-ի դեպքում եզրաշերտ ընդհանրապես չկա:

Առկա աստիճանների 25%-ը ունեն բազրիք, իսկ 75%-ը՝ ոչ:


Ստացվում է, որ հաստատություններից մոտ 1/3 դեպքերում առաջին հարկում սայլակով հաշմանդամի համար ինքնուրույնաբար տեղաշարժվելը ոչ միայն անհնար է, այլև կարող է վտանգավոր լինել:

**Աղյուսակ 8.**

		Տոկոսներով
<b>Առաջին հարկում սայլակով հաշմանդամի տեղաշարժմանը խոչընդոտող այլ գործոններ</b>	նեղ միջանցք	0.9
	մեկ առանձին աստիճան առանց թեքահարթակի	1.8
	այլ խոչընդոտներ չկան	97.4

Հաստատության ներսում սայլակով հաշմանդամի համար հաջորդ էական խոչընդոտ են հանդիսանում ներսի դռները, քանզի դրանց անհամապատասխանությունը նորմերին<sup>7</sup> անհնար է դարձնում հաշմանդամի լիարժեք օգտվելը տվյալ հաստատության ծառայություններից:

**Գծապատկեր 9.**



1. նույնն է և լավ կերպով համապատասխանում է նորմերին /74.6%/
2. նույնն է և բավարար չափով համապատասխանում է նորմերին /1.8%/
3. նույնն է, սակայն մատչելի է միայն նեղ սայլակով հաշմանդամների համար /4.4%/
4. նույնն է, սակայն ընդհանրապես մատչելի չէ որևէ սայլակի համար /0.9%/
5. տարբեր է և լավ կերպով համապատասխանում է նորմերին /6.1%/
6. տարբեր է և բավարար չափով համապատասխանում է նորմերին /3.5%/
7. տարբեր է, սակայն մատչելի է միայն նեղ սայլակով հաշմանդամների համար /2.6%/
8. տարբեր է, սակայն ընդհանրապես մատչելի չէ որևէ սայլակի համար /2.6%/
9. բացի մուտքի դռից, այլ դռներ չկան/3.5%/

Հաստատության ներսում դռները կարող են ունենալ ինչպես նույն լայնությունը, այնպես էլ՝ տարբեր: Ինչպես երևում է գծապատկեր 9-ից, դիտարկված հաստատությունների

<sup>7</sup> Տե՛ս հավելված 2:

զգալի մասում դռներն ունեն նույն լայնությունը և լավ կերպով (74.6%) կամ բավարար չափով (1.8%) համապատասխանում են նորմերին, մի մասն էլ (4.4%) մատչելի են միայն նեղ սայլակների համար, իսկ 0.9%-ը ընդհանրապես չեն համապատասխանում նորմերին: Միննույն ժամանակ դիտարկված հաստատությունների մոտ 14.8%-ում ներսի դռների լայնությունը տարբեր է, որոնցից մի մասը լավ կերպով (6.1%) կամ բավարար չափով (3.5%) համապատասխանում են նորմերին, 2.6%-ը մատչելի են միայն նեղ սայլակների համար, իսկ 2.6%-ը ընդհանրապես մատչելի չեն որևէ սայլակի համար:

Այսպիսով, ստացվում է, որ դիտարկված հաստատություններում 3.5% դեպքերում է, որ ներսի դռներն ընդհանրապես մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար: Ընդ որում, դիտարկվել է նաև հաստատության ներսում ոչ մատչելի դռներով սենյակների ֆունկցիոնալ նշանակությունը. թերապևտի սենյակ (33.3%), ադմինիստրատիվ սենյակներ (44.4%) և ռենտգենի սենյակ (22.2%): Պարզվում է, որ ոչ մատչելի դռներով սենյակների մոտ կեսից ավելին ունեն կարևոր ֆունկցիոնալ նշանակություն սայլակով հաշմանդամների համար:

## **Է. Վերելակ**

Ստորև ներկայացվում են դիտարկված հաստատությունների շինությունների հարկերի թվի համամասնությունը, ինչպես նաև այդ շինություններում տեղակայված՝ դիտարկված հաստատությունների զբաղեցրած հարկերի համամասնությունը:


### **Աղյուսակ 9.**

<b>Շինության հարկերի թիվը</b>		<b>%-ով</b>	<b>Հաստատության զբաղեցրած հարկերը</b>		<b>%-ով</b>
1	1 հարկ	9.6	1	1-ին և դրանից բարձր հաստատության բոլոր հարկերը	52.2
2	1-3 հարկ	34.2	2	միայն 1-ին հարկը	28.3
3	4-6 հարկ	40.4	3	1-3 հարկերը	11.5
4	7 և ավելի հարկեր	15.8	4	4-6 հարկերը	7.1
			5	7-րդ և դրանից բարձր հարկերը	0.9

Ինչպես երևում է աղյուսակ 9-ից, դիտարկված հաստատությունների ընդամենը 9.6%-ն է գտնվում առաջին հարկում, մնացած 90.4%-ը գտնվում են 1-ից բարձր հարկերում: Միաժամանակ դիտարկված հաստատությունների ընդամենը 28.3%-ն են գտնվում առաջին հարկում, դրանցից կեսից ավելին զբաղեցնում են առաջինից բարձր բոլոր հարկերը, 11.5%-ը՝ 1-3 հարկերը, 7.1%-ը՝ 4-6 հարկերը, իսկ 0.9%-ը տեղակայված են 7-րդ և դրանից բարձր հարկերում: Նման պայմաններում շատ կարևոր են դառնում առաջինից բարձր հարկեր զբաղեցնող հաստատություններում վերելակի առկայությունն ու դրա համապատասխանությունը (վերելակի խցի խորություն և դռան բացվածքի լայնություն) սահմանված նորմերին, այլապես սայլակով հաշմանդամի տեղաշարժվելը տվյալ հաստատությունում դառնում է անհնար:

Դիտարկված հաստատություններից 57.7%-ում կա վերելակ, իսկ 42.3%-ում՝ ոչ:

**Գծապատկեր 10. Հաստատության զբաղեցրած հարկերի և այդ հաստատություններում վերելակի առկայության համամասնությունը**



		Վերելակի առկայություն /%-ով/	
		կա	չկա
Հաստատության զբաղեցրած հարկերը	1-ից բարձր բոլոր հարկերը	50	50
	Միայն առաջին հարկը	0	0
	1-3 հարկերը	69.2	30.8
	4-6 հարկերը	87.5	12.5
	7-րդ և դրանից բարձր	100	0

Ինչպես երևում է գծապատկեր 10-ից, 1-ից բարձր բոլոր հարկերը զբաղեցնող հաստատությունների կեսում հավասարապես կա և չկա վերելակ, 1-3 հարկերը զբաղեցնող 30.8%-ում և 4-6 հարկերը զբաղեցնող հաստատությունների 12.5%-ում չկա վերելակ, իսկ 7-րդ և դրանից բարձր գտվող հաստատություններից բոլորում էլ կա վերելակ:


Փաստորեն, 1-ից բարձր բոլոր հարկերը զբաղեցնող հաստատություններում, որտեղ չկա վերելակ, սայլակով հաշմանդամը չի կարող տեղաշարժվել և օգտվել մատուցվող ծառայություններից:

Նույնիսկ այն հաստատություններում, որտեղ կա վերելակ, դա դեռ չի նշանակում, որ դրանից կարող է օգտվել սայլակով հաշմանդամը, քանզի շատ հաճախ վերելակի չափերը թույլ չեն տալիս դա անել: Ստորև ներկայացվում է, թե դիտարկված հաստատություններում առկա վերելակների որ մասն է համապատասխանում սահմանված նորմերին:<sup>8</sup> Սայլակով հաշմանդամների համար վերելակի մատչելի-

<sup>8</sup> Տե՛ս հավելված 2:

ությունը գնահատվել է սահմանված նորմերին վերելակի խցի խորության և դռան բացվածքի լայնության համապատասխանությամբ:

**Գծապատկեր 11. Վերելակի բացվածքի լայնության և խցի խորության համապատասխանությունը նորմերին.**



Ինչպես երևում է գծապատկեր 11-ից, դիտարկված հաստատություններում առկա վերելակներից մի մասը համապատասխանում է նորմերին միայն մեկ չափանիշով. միայն ըստ դռան լայնության (2.3%) կամ ըստ խցի խորության (15.9%), իսկ վերելակներից 6.8%-ը ընդհանրապես չեն համապատասխանում նորմերին ոչ մի չափանիշով: Դիտարկված հաստատություններից միայն 65.9%-ն է համապատասխանում նորմերին և հետևաբար մատչելի է սայլակով հաշմանդամի համար:

Նշենք նաև, որ դիտարկված հաստատություններից 9.1%-ի դեպքում առկա վերելակները տևական ժամանակ է, ինչ չեն աշխատում, հետևաբար հնարավոր չի եղել դրանց մատչելիության գնահատումը, այդուհանդերձ բազմաօրյա հաստատության վերելակի չափախառնելի ինքնին անանցանելի խոչընդոտ է սայլակով հաշմանդամի համար:

Նույնիսկ վերելակի մատչելիության պայմաններում, երբեմն վերելակ տանող ճանապարհին հանդիպում են խոչընդոտներ, որոնք անանցանելի են սայլակով հաշմանդամի համար:

Այսպիսով, դիտարկված հաստատություններում վերելակ տանող ճանապարհին 4.8%-ի մոտ կան աստիճաններ առանց թեքահարթակի, ընդ որում դրանցից կեսի մոտ թեքահարթակի կառուցումը հնարավոր է, մյուս կեսի մոտ՝ ոչ: Թեքահարթակի կառուցման անհնարինության միակ պատճառը բոլորի դեպքում հանդիսանում է անբավարար տարածությունը: Աստիճաններից ոչ մեկի մոտ չկա բազրիք:

Վերելակ տանող ճանապարհին արձանագրվել են նաև հետևյալ խոչընդոտները. բորոյուր, շեմ (2%) և առանց թեքահարթակի սանդուղք դեպի ներքև (4.1%):


## Ը. Հանրային սանհանգույց

Դիտարկված հաստատություններում գնահատվել են նաև առկա հանրային սանհանգույցների մատչելիությունը սայլակով հաշմանդամի համար:

Դիտարկված հաստատություններից 84.2%-ում առկա է հանրային սանհանգույց, 15.8%-ում՝ համապատասխանաբար ոչ:

Ստորև ներկայացվում է առկա հանրային սանհանգույցների դռների համապատասխանությունը նորմերին:<sup>9</sup>

### Գծապատկեր 12.



1. սանհանգույցի դուռը լիովին համապատասխանում է նորմերին /59.4%/
2. սանհանգույցի դուռը բավարար չափով համապատասխանում է նորմերին /5.2%/
3. սանհանգույցի դուռը մատչելի է միայն նեղ սայլակների համար /9.4%/
4. սանհանգույցի դուռը ընդհանրապես մատչելի չէ որևէ սայլակի համար /26%/

Գծապատկեր 12-ից երևում է, որ դիտարկված հաստատությունների հանրային սանհանգույցի դռները լիովին (59.4%), կամ բավարար չափով (5.2%) համապատասխանում են սահմանված նորմերին, այնինչ 9.4%-ը մատչելի են միայն նեղ սայլակների համար, իսկ դռների 26%-ը ընդհանրապես մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար:

Դիտարկվել են նաև դռների բացվելու ուղղությունները, քանզի մեծ ջանքերի միջոցով բացվող դռները լուրջ խնդիրներ են ներկայացնում հենակներից կամ սայլակից օգտվող հաշմանդամի համար: Դուռ բացելու և փակելու առավելագույն ջանքը չպետք է գերազանցի 2.5 կգ: Այս առումով շատ կարևոր է դառնում դռների բացման ուղղությունը: Դեպի դուրս կամ կողք բացվող դռներն առավել մատչելի են սայլակից օգտվող հաշմանդամի համար: Դիտարկված հանրային սանհանգույցի դռների 34.4%-ը բացվում է դեպի ներս, իսկ 64.6% և 1%-ը՝ համապատասխանաբար դեպի դուրս և կողք:

Ստացվում է, որ սայլակով հաշմանդամի համար դիտարկված հանրային սանհանգույցներից 1/3 դեպքում օգտվելը գրեթե անհնար է կամ բավականին դժվար:

Սանհանգույցի դռան մատչելիությունը դեռևս չի երաշխավորում սայլակով հաշմանդամի անարգել տեղաշարժվելը սանհանգույցում:

<sup>9</sup> Տե՛ս հավելված 2:

**Աղյուսակ 10.**

		Տոկոսներով
<b>Դեպի զուգարանակոնք սայլակի մոտեցմանը խոչընդոտող առարկաների առկայություն</b>	կան խոչընդոտող շարժական առարկաներ /լվացարան, սարքավորում, պահարան/	9.4
	կան խոչընդոտող անշարժ առարկաներ /դուռ, բորոյուր, շեմ/	19.8
	չկա որևէ խոչընդոտող առարկա	70.8

Աղյուսակ 10-ում երևում է, որ դիտարկված սանհանգույցների 9.4%-ում կան խոչընդոտող առարկաներ, որոնք շարժական են, այսինքն անհրաժեշտության դեպքում ենթակա են տեղափոխման, այնինչ 19.8%-ում կան անշարժ առարկաներ, որոնց տեղափոխումն անհնար է, դրանք ենթակա են միայն վերակառուցման: Սանհանգույցների զգալի մասում խոչընդոտող առարկաներ չկան (70.8%):

Բացի զուգարանակոնքին սայլակի մոտեցման հնարավորությունը, անհրաժեշտ է նաև սանհանգույցում սայլակի պտտման, տեղաշարժման համար տարածություն, առանց որի զուգարանակոնքից օգտվելն անհնար է:

**Աղյուսակ 11.**

		Տոկոսներով
<b>Սանհանգույցում սայլակի տեղաշարժման, պտտման համար անհրաժեշտ տարածության առկայություն</b>	կա անհրաժեշտ տարածություն	55.2
	չկա անհրաժեշտ տարածություն, միջանցքը նեղ է	42.7
	չկա անհրաժեշտ տարածություն, ներսում նեղ խցիկներ են	2.1


Դիտարկված հաստատություններից գրեթե կեսում (44.8%) չկա անհրաժեշտ տարածություն սայլակի տեղաշարժման համար:

Զուգարանակոնքից օգտվելու համար սայլակով հաշմանդամին անհրաժեշտ է հատուկ բռնածող, որը պետք է տեղադրված լինի զուգարանակոնքի կողքի պատին, որպեսզի հաշմանդամն ազատ կարողանա սայլակից զուգարանակոնքին տեղափոխվել: Այն պետք է ունենա համապատասխան բարձրություն և հեռավորություն զուգարանակոնքից:<sup>10</sup> Դիտարկման արդյունքում պարզվել է, որ առկա հանրային սանհանգույցների 97.9%-ում ընդհանրապես չկա հաշմանդամների համար նախատեսված բռնածող, իսկ առկա 2.1%-ի մոտ այդ բռնածողի բարձրությունը և հեռավորությունը լիովին համապատասխանում է նորմերին:

<sup>10</sup> Տե՛ս հավելված 2

Փաստորեն, հանրային սանհանգույցների զգալի մեծամասնությունում նույնիսկ սանհանգույց անարգել մուտք գործելու և ազատ տեղաշարժվելու պայմաններում սայլակով հաշմանդամը չի կարող ինքնուրույն օգտվել զուգարանակոնքից: Որպեսզի սայլակով հաշմանդամը կարողանա օգտվել զուգարանակոնքից, դրա կողային հատվածներում պետք է լինի անհրաժեշտը տարածություն ինչպես ըստ լայնության, այնպես էլ ըստ խորության:<sup>11</sup>

**Գծապատկեր 13.**



1. կա առանց խոչընդոտների տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար միայն ըստ խորության /13.5%/
2. կա առանց խոչընդոտների տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար միայն ըստ լայնության /4.2%/
3. կա առանց խոչընդոտների տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար և՛ ըստ լայնության, և՛ ըստ խորության /20.8%/
4. զուգ.-ի կողային հատվածում կա խոչընդոտող առարկա, որն անանցանելի է դարձնում սայլակով հաշմանդամի մոտեցումը զուգ.-ին /1%/
5. զուգ.-ի կողային հատվածում կա առարկա, որը չի խոչընդոտում սայլակով հաշմանդամի մոտեցումը զուգ.-ին /1%/
6. զուգ.-ի կողային հատվածում չկա տարածություն /59.4%/


Ինչպես երևում է գծապատկեր 13-ից, դիտարկված հանրային սանհանգույցներից գրեթե 60%-ում զուգարանակոնքի կողային հատվածներում չկա անհրաժեշտ տարածություն, որը թույլ կտա սայլակով հաշմանդամին օգտվել զուգ.-ից, միաժամանակ զուգարանակոնքերից որոշ մասում կա տարածություն միայն ըստ խորության (13.5%) կամ լայնության (4.2%): Միայն դիտարկված սանհանգույցների 20.8%-ում զուգ.-ի կողային հատվածներում կա անհրաժեշտ տարածություն:

<sup>11</sup> Տե՛ս հավելված 2



Ձուգարանակոնքի կողային հատվածում տարածություն չլինելու դեպքում, սայլակով հաշմանդամի համար վերջին հնարավորությունը գուգ.-ից օգտվելու համար գուգ.-ի դիմացի հատվածում անհրաժեշտ տարածությունն է:

**Գծապատկեր 14.**



1. կա տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար միայն ըստ խորության /2.1%/
2. կա տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար միայն ըստ լայնության /7.3%/
3. կա տարածություն, որը մատչելի է սայլակով հաշմանդամի համար և՛ ըստ լայնության, և՛ ըստ խորության /39.6%/
4. չկա տարածություն /51%/

Դիտարկված սանհանգույցների 51% դեպքերում գուգ.-ի դիմացի հատվածում չկա տարածություն, միաժամանակ կա տարածություն, որը մատչելի է միայն ըստ լայնության (7.3%) կամ խորության (2.1%), և միայն 39.6% դեպքերում կա տարածություն գուգ.-ի դիմացի հատվածում, որը հնարավոր է դարձնում սայլակով հաշմանդամի կողմից գուգ.-ից օգտվելը:

Այսպիսով ստացվում է, որ դիտարկված հանրային սանհանգույցների մոտ կեսից ավելինի դեպքում սայլակով հաշմանդամը չի կարող օգտվել դրանից, քանզի գուգ.-ի կողային և դիմացի հատվածում չկա անհրաժեշտ տարածություն:

Որպեսզի սանհանգույցում հաշմանդամի համար հնարավոր լինի օգտվել լվացարանից, այն պետք է տեղադրված լինի այնպես, որ չկրճատի անվասայլակի տեղակայման համար անհրաժեշտ տարածությունը, ինչպես նաև ունենա ներքին խորշ, որպեսզի նրա տակ տեղավորվի անվասայլակը:

**Աղյուսակ 12.**

	Տոկոսներով	
<b>Սանհանգույցում լվացարանի առկայությունն ու համապատասխանությունը նորմերին</b>	կա լվացարան, որի բարձրությունը համապատասխանում է նորմերին	35.4
	կա լվացարան, որի բարձրությունը չի համապատասխանում նորմերին	58.3
	չկա լվացարան	6.3

Դիտարկված հանրային սանհանգույցներում առկա լվացարաններից կեսից ավելին (58.3%) բարձրությունը չի համապատասխանում նորմերին և մատչելի չէ սայլակով հաշմանդամի համար:<sup>12</sup>

Հաշվի առնելով արտակարգ իրավիճակների ի հայտ գալու հնարավորությունը, սանհանգույցում, զուգարանակոնքի կողքին անհրաժեշտ է տազնապի կոճակի կամ զանգի առկայությունը: Վերջինիս առկայությունն էլ ավելի կարևոր է սայլակով հաշմանդամի համար՝ անհետաձգելի օգնության կարիք ունենալու (անվասայլակից հաշմանդամի հանկարծակի ընկնելու, զուգարանակոնքից անվասայլակի անմատչելի հեռավորությամբ հեռանալու և նման այլ) դեպքերում:

Դիտարկման արդյունքում պարզվել է, որ հանրային սանհանգույցների 98.9%-ում ընդհանրապես չկա հաշմանդամների համար (և ոչ միայն) նախատեսված տազնապի կոճակ, իսկ առկա 1.1%-ի մոտ այդ տազնապի կոճակի հեռավորությունը զուգարանակոնքից չի համապատասխանում նորմերին: Վերջինից կարելի է եզրակացնել, որ տազնապի կոճակի տեղադրումը նման դեպքերում կրում է ձևական բնույթ և մինչ այն տեղադրելը չեն ուսումնասիրվել առկա չափանիշները:

**Թ. Հիվանդասենյակների, դրանցում առկա սանհանգույցների, ռենտգենի և սոնոգրաֆիայի սենյակների մատչելություն (միայն ստացիոնար բուժհաստատությունների համար)**

Դիտարկված ստացիոնար բուժհաստատությունների հիվանդասենյակներից 96.6%-ում կա սայլակով հաշմանդամի տեղաշարժման համար անհրաժեշտ տարածություն, իսկ 3.4%-ում՝ համապատասխանաբար ոչ:

Ստացիոնար բուժհաստատության հիվանդասենյակում գտնվելու (բուժվելու) ընթացքում մեծ կարևորություն է ստանում սանհանգույցի առկայությունը հիվանդասենյակի ներսում՝ հատկապես սայլակով հաշմանդամի համար:

**Աղյուսակ 13.**

		Տոկոսներով
<b>Հիվանդասենյակներում սանհանգույցի առկայություն</b>	կա բոլոր հիվանդասենյակներում	65.5
	կա ոչ բոլոր հիվանդասենյակներում՝ անկախ վճարովի կամ անվճար լինելուց	27.6
	չկա ոչ մի հիվանդասենյակում	6.9

Դիտարկված ստացնար բուժհաստատությունների հիվանդասենյակների սանհանգույց կա ոչ բոլոր հիվանդասենյակներում (27.6%) կամ ընդհանրապես չկա (6.9%), այն առկա է միայն հիվանդասենյակների 65.5%-ում: Ստացվում է, որ այն հիվանդասենյակներում, որտեղ չկա սանհանգույց, սայլակով հաշմանդամը չի կարող օգտվել սանհանգույցից առանց կողմնակի օգնության:

Այդուհանդերձ, սանհանգույցի առկայությունը հիվանդասենյակում դեռևս չի երաշխավորում սայլակով հաշմանդամի օգտվելու հնարավորությունը դրանից: Մտորև ներկա-

<sup>12</sup> Տե՛ս հավելված 2

յացվում է հաշմանդամի համար հիվանդասենյակներում առկա սանհանգույցների մատչելիության մակարդակը:


**Աղյուսակ 14.**

	Տոկոսներով	
<b>Հիվանդասենյակների սանհանգույցի դռան համապատասխանությունը նորմերին</b>	սանհանգույցի դուռը լավ կերպով համապատասխանում է նորմերին	33.3
	սանհանգույցի դուռը բավարար չափով համապատասխանում է նորմերին	3.7
	սանհանգույցի դուռը ընդհանրապես մատչելի չէ որևէ սայլակի համար	63

Ինչպես երևում է աղյուսակ 14-ից, հիվանդասենյակների սանհանգույցների 63%-ի դռները մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար, այսինքն ստացվում է, որ նույնիսկ սանհանգույցի առկայության պայմաններում հաշմանդամը ստիպված է դիմել կողմնակի օգնության: Միաժամանակ սանհանգույցի դռների բացման ուղղություններն են. դեպի դուրս (33.3%), դեպի ներս (63%) և դեպի կողք (3.7%):

Դիտարկված հիվանդասենյակների սանհանգույցներում դեպի զուգարանակոնք սայլակի մոտեցմանը խոչընդոտող առարկաներ չեն արձանագրվել, սակայն այդ սանհանգույցներից 63%-ում սայլակի տեղաշարժման, պտտման համար անհրաժեշտ տարածություն չի եղել:

**Գծապատկեր 15.**



- կա բռնաձող, որի բարձրությունը և հեռավորությունը զուգ.-ից համապատասխանում են նորմերին /3.7%/
- կա բռնաձող, որի բարձրությունը և հեռավորությունը զուգ.-ից չեն համապատասխանում նորմերին /3.7%/
- կա բռնաձող, որը միայն զուգ.-ից իր հեռավորությամբ է համապատասխանում նորմերին /3.7%/
- չկա բռնաձող /88.9%/

Հիվանդասենյակների սանհանգույցներից զգալի մեծամասնությունում (88.9%) չկա հաշմանդամների համար նախատեսված բռնաձող, իսկ առկա 3.7%-ի մոտ այն չի համապատասխանում անհրաժեշտ նորմերին:

**Աղյուսակ 15.**

		Տոկոսներով
<b>Չուզարանակոնքի կողային հատվածներում տարածություն</b>	կա առանց խոչընդոտների տարածություն, որը մատչելի է և խորությամբ, և լայնությամբ	33.3
	կա խոչընդոտող առարկա, որն անանցանելի է դարձնում սայլակով հաշմանդամի մոտեցումը գուզարանակոնքին	7.4
	չկա տարածություն	59.3

Ինչպես երևում է աղյուսակ 15 և 16-ից, սանհանգույցի կողային (59.3%) և դիմացի (55.6%) հատվածներում չկա տարածություն, կողային հատվածում մատչելի տարածություն հանդիպում է 33.3%-ի դեպքերում, իսկ դիմացի հատվածում՝ 29.6%:

**Աղյուսակ 16 .**

		Տոկոսներով
<b>Չուզարանակոնքի դիմացի հատվածում տարածություն</b>	կա տարածություն, որը մատչելի է միայն ըստ լայնության	14.8
	կա տարածություն, որը մատչելի է և ըստ լայնության, և ըստ խորության	29.6
	չկա տարածություն	55.6

Հիվանդասենյակների սանհանգույցներում առկա լվացարանների միայն 33.3%-ն է իր բարձրությամբ համապատասխանում նորմերին, 55.6%-ի դեպքում այն չի համապատասխանում նորմերին, իսկ 11.1% սանհանգույցներում ընդհանրապես չկա լվացարան: Դիտարկման արդյունքում պարզվել է, որ հիվանդասենյակներում առկա հանրային սանհանգույցների 88.9%-ում ընդհանրապես չկա հաշմանդամների համար (և ոչ միայն) նախատեսված տազնապի կոճակ, իսկ առկա 11.1%-ի մոտ այդ տազնապի կոճակի հեռավորությունը գուզարանակոնքից համապատասխանում է նորմերին:


Ինչպես ցույց տվեցին դիտարկումները, ստացիոնար բուժհաստատություններից 92.9%-ում առկա է սոնոգրաֆիայի սենյակ, որը մատչելի է սայլակով հաշմանդամի սպասարկման համար, իսկ համապատասխանաբար 7.1%-ում չկա սոնոգրաֆիայի սենյակ:

Միաժամանակ դիտարկված հաստատություններից 85.7%-ում կա ռենտգենի սենյակ, որը մատչելի է սայլակով հաշմանդամի սպասարկման համար, իսկ 14.3%-ում չկա ռենտգենի սենյակ:


Համադրելով դիտարկված հաստատություններում հետազոտված գնահատման ցուցանիշները՝ իրականացվել է դիտարկված բուժհաստատությունների և դատարանների դասակարգում չորս հիմնական խմբերի.

- մատչելի
- հիմնականում մատչելի
- դժվարամատչելի
- անմատչելի

Գծապատկեր 16.



Գծապատկեր 17.



Յուրաքանչյուր խմբում ընդգրկված հաստատությունների համար առանձնացվել են սայլակով հաշմանդամի ֆիզիկական մատչելիությանը խոչընդոտող գործոնները և դրանց հիման վրա մշակվել են հանձնարարականներ: Վերջիններս թույլ կտան հաստատությունների ղեկավարներին իրականացնել իրենց հաստատությունը սայլակով հաշմանդամի համար առավել մատչելի դարձնելուն ուղղված համապատասխան բարեփոխումներ:<sup>13</sup>

<sup>13</sup> Դիտարկված հաստատությունների մատչելիությանը խոչընդոտող գործոնները և դրանց հիման վրա մշակված հանձնարարականները տե՛ս հավելված 3-ում

## 5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, տեսնում ենք, որ Երևանում տեղակայված բուժհաստատությունների և դատարանների շենքերի հարդարանքն ընդհանուր առմամբ չի համապատասխանում սահմանված նորմերին և համապատասխանաբար անմատչելի է դարձնում սայլակով հաշմանդամների մուտքն ու տեղաշարժվելը այդ հաստատություններում, մասնավորապես.

- ✓ Հարցազրույցին մասնակցած հաստատության ղեկավար անձնակազմի ներկայացուցիչների կողմից իրենց հաստատությունների մատչելիության գնահատականը ընդհանուր առմամբ չի համապատասխանում իրականությանը, իսկ նրանցից որոշ մասը (4.5%) դժվարացել է գնահատել իր հաստատության մատչելիության մակարդակը: Այստեղից կարելի է ենթադրել, որ սա արդյունք է տեղեկատվության պակասի, այսինքն հարցվողներն ուղղակի չեն պատկերացնում, թե ինչպիսի պայմաններ պետք է հաշվի առնել հաստատության կառուցման կամ վերանորոգման ժամանակ՝ սայլակով հաշմանդամի համար հաստատության ֆիզիկական մատչելիությունն ապահովելու համար:
- ✓ Դիտարկված հաստատություններից միայն 20.2%-ն է առաջիկա 1 տարվա բյուջեում նախատեսում միջոցներ հաշմանդամների համար շինությունն ավելի մատչելի դարձնելուն ուղղված բարեփոխումներ իրականացնելու համար, չնայած նրան, որ դրանց զգալի մեծամասնությունն ունի այդպիսի վերակառուցման, վերանորոգման անհրաժեշտություն:
- ✓ Հաստատությունների՝ բարեփոխումներ կամ վերակառուցումներ չնախատեսելու առաջնային և ամենատարածված պատճառը ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունն է, երկրորդ ամենահաճախ հանդիպող պատճառն այն է, որ շինության ներկայիս նախագիծը թույլ չի տալիս կատարել համապատասխան վերակառուցումներ կատարել:
- ✓ Հաստատությունների մոտ 30%-ի դեպքում սայլակով հաշմանդամի մուտքը հաստատություն արդեն իսկ անհնար է դառնում մինչ հաստատության բուն մուտքին հասնելը՝ բակում կամ փողոցում առկա առանց թեքահարթակի աստիճանների, կողնակների և այլ խոչընդոտների պատճառով:
- ✓ Հաստատությունների զգալի մասը (65.5%) չունի այլընտրանքային մուտք, ինչը նշանակում է, որ գլխավոր մուտքի անմատչելիության կամ անանցանելիության պայմաններում նվազում է հաշմանդամների (և ոչ միայն)՝ տվյալ հաստատություն մուտք գործելու հնարավորությունը:
- ✓ Երբեմն սայլակով հաշմանդամի համար խոչընդոտ է հանդիսանում ոչ միայն մուտքի դռան լայնությունը, այլև դռան մոտ գտնվող շեմը, որի բարձրությունը շատ հաճախ անանցանելի է սայլակով հաշմանդամի համար (7.9%):

- ✓ Հաստատությունների մեծաստությունում մուտքի դռները համապատասխանում են սահմանված նորմերին և մատչելի են սայլակով հաշմանդամի համար՝ անկախ նրանից, մեկփեղկանի են, թե՛ երկփեղկ:
- ✓ Հաստատություններից մոտ 1/3 դեպքերում առաջին հարկում սայլակով հաշմանդամի համար տեղաշարժվելը ոչ միայն անհնար է, այլև կարող է վտանգավոր լինել:
- ✓ Դիտարկված հաստատություններում 3.5% դեպքերում ներսի դռներն ընդհանրապես մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար:
- ✓ Դիտարկված հաստատությունների ընդամենը 28.3%-ն են գտնվում առաջին հարկում, դրանցից կեսից ավելին զբաղեցնում են առաջինից բարձր բոլոր հարկերը, ընդ որում այդ հաստատությունների կեսում հավասարապես կա և չկա վերելակ, 1-3 հարկերը զբաղեցնող 30.8%-ում և 4-6 հարկերը զբաղեցնող հաստատությունների 12.5%-ում չկա վերելակ:
- ✓ Դիտարկված հաստատություններից միայն 65.9%-ի դեպքում է վերելակը համապատասխանում նորմերին և հետևաբար մատչելի է սայլակով հաշմանդամի համար. առկա վերելակներից մի մասը համապատասխանում է նորմերին միայն մեկ չափանիշով. միայն ըստ դռան լայնության (2.3%) կամ ըստ խցի խորության (15.9%), իսկ վերելակներից 6.8%-ը ընդհանրապես չեն համապատասխանում նորմերին ոչ մի չափանիշով:
- ✓ Դիտարկված հաստատությունների հանրային սանհանգույցի դռների 26%-ը ընդհանրապես մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար:
- ✓ Դիտարկված սանհանգույցներից 19.8%-ում կան անշարժ խոչընդոտող առարկաներ, որոնց տեղափոխումն անհնար է, դրանք ենթակա են միայն վերակառուցման:
- ✓ Դիտարկված հաստատություններից գրեթե կեսում (44.8%) չկա անհրաժեշտ տարածություն սայլակի տեղաշարժման համար:
- ✓ Հանրային սանհանգույցների 97.9%-ում ընդհանրապես չկա հաշմանդամների համար նախատեսված բռնաձող: Դիտարկված հանրային սանհանգույցներից գրեթե 60%-ում զուգարանակոնքի կողային հատվածներում և 51% դեպքերում զուգ-ի դիմացի հատվածում չկա տարածություն: Ստացում է, որ հանրային սանհանգույցների զգալի մեծամասնությունում նույնիսկ սանհանգույց անարգել մուտք գործելու և ազատ տեղաշարժվելու պայմաններում սայլակով հաշմանդամը չի կարող ինքնուրույն օգտվել զուգարանակոնքից: Հանրային սանհանգույցների 98.9%-ում չկա հաշմանդամների համար (և ոչ միայն) նախատեսված տազնապի կոճակ:
- ✓ Ստացիոնար բուժհաստատություններում առկա սանհանգույցների 63%-ի դռները մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար, այսինքն ստացվում է, որ նույնիսկ սանհանգույցի առկայության պայմաններում հաշմանդամը ստիպված է դիմել կողմնակի օգնության: Սանհանգույցի կողային (59.3%) և դիմացի (55.6%) հատվածներում չկա տարածություն: Դիտարկման արդյունքում պարզվել է, որ

հիվանդասենյակներում առկա հանրային սանհանգույցների 88.9%-ում ընդհանրապես չկա հաշմանդամների համար (և ոչ միայն) նախատեսված տազնապի կոճակ: Այսպիսով, հիվանդասենյակներում առկա սանհանգույցներն ընդհանուր առմամբ մատչելի չեն սայլակով հաշմանդամի համար:

- ✓ Ստացիոնար բուժհաստատություններում առկա ռենտգենի և սոնոգրաֆիայի սենյակների զգալի մեծամասնությունը մատչելի է սայլակով հաշմանդամների համար:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, դիտարկված հաստատությունների զգալի մեծամասնությունն ունի հաստատությունը սայլակով հաշմանդամների համար առավել մատչելի դարձնելուն ուղղված վերակառուցման, բարեփոխումների անհրաժեշտություն՝ փողոցից դեպի մուտք անցնող հատվածում, մուտքի դռան մոտ, առաջին հարկում, սանհանգույցներում, վերելակում:

